Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8-3
P-20
93

Дневник

1899

2003

5835.

№ 8.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԹԱՄԱՐ

ԳՐԵՑ Է ՀԻՆԳ կապէկ.

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մ. Գ. Ռասիմեանցի
1889

5835

№ 8.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

8 —3
Բ-20
Ակ

ՊԱՏԿԵՐ

ԹԱՄԱՐ

3284

Թարգմանեց

ՄԵԼՔՈՆ ՊԱՊԵԱՆ-ԴԱՆԱԳԵՈՉ

ԳԻՆՆ Է ՀԻՆԳ կոպէկ.

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
U.S.S.R. Публичная Библиотека
7/XI-1922
Москва, Мясницкая
Ա. ՍՏԱՍԻՆԻՑԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մ. Դ. Թոմէնեանցի
1889

4

Дозволено цензурою. Тифлисъ. 22-го Ноября, 1889 года.

Типографія М. Д. Ротиніанца на Гол. Просп. домъ № 41.

ԹԱՄԱՐ

—

Նռակարգ ժանիքաւոր պարիսպներով պատած Բագուն, սև աշտարակներով այդ սպիտակ քաղաքը, Բագուն, կրակապաշտների սրբազան մայրաքաղաքն, ասես թէ մեռած լինէր հարաւի կիզիչ ճառագայթների տակ։ Ամենաթոյլ հովիկ անգամ չէ փչում հրատապ փողոցներում. խորին լռութիւն է տիրել անշարժ քաղաքին։ Միայն թնդանոթի պայթիւնն է լսում մերթ ընդ մերթ հեռու դաշտավայ-

րից. երկնքի պայծառ կապուտակի վրայ երևում է ծխի փոքրիկ սպիտակ ամպիկը. ռումբի պոկոտած մի քանի քարեր խրամատից գլորում են ցած։

Ուրթսուն օր է արդէն, որ պարսից Նուր-Էդդին շահը պաշարել է քաղաքը. նա պահանջում է նախահայրերից իրեն ժառանգութիւն մնացած քաղաքը և երդուել է կամ տիրապետել, կամ կործանել նրան։ Քաղցն ու ծարաւը սոսկալի դաշնակից դարձած, նպաստում էին նրա կամքին, — լուռ, քաղցած ամբոխը հազիւ հազ շարժւում է հրապարակներում. մարդիկ թուլութիւնից հառաչ անգամ չէին կարողանում արձակել. սևացած, ցամաքած լեզուները կպել էին քմքերին և շրթունքներն ասես թէ քարացած լինէին։ Միայն պարիսպների պաշտպան զինուորականներն էին, որ ջրհորի ջրի վերջին մնացորդը, պաշարի վերջին հատիկները ստացած, հրացայտ աչքերով, զէնքերը պինդ սեղմած դեռ ևս մեն են դալիս կատաղի անէծք թափելով աստմների միջից, որովհետև պաշարուած քաղաքում շուտով վառօդի կարիք էլ է զգացուելու, ինչպէս զգալի է արդէն հացի և ջրի կարիքը։ Իսկ կրակապաշտները տաճարում աղօթում են վառուող Նաւթի բոցի առաջ, որը անդադար դուրս է գալիս երկրիս կեղևի պատռուածքից։ Զուր է նրանց աշխարհիս տէր, արեգակին ուղղած աղերսը։ Լուսատու Աստուածն անկարեկից է նրանց թշուառութեան. նա իր ճառագայթներով ոսկեզօծում է հրատապ աւերակներն և ծիրանի գոյնով ներկում ծխի քուլաներն, որոնք ծանր ծանր բարձրանալով քաղաքից, սիլուում և բոսորային ամպի նման կանգնում են նրա վերևը։

Նուր-Էդդինի թնդանօթի պայթիւններն դադարում են մի առ վայրկեան և յաղթական կառախումբերի դղրդոցի նման կրկին որոտում են արձագանգ տալով երկրիս վրայ։ Մերթ ընդ մերթ քուրմերն ու աղօթողները յանկարծ ջախջախուած գլխով գլորում են գետին։ Ահագին ռումբերը զարհուրելի ոյժով խփում են պատերին և ներս մղտնում։ Ջարդ ու փշուր են լինում խաների պալատի խորտակուած դռներն և նուրբ քանդակները։ Եւ ահա մէկ էլ տեսար ժողովուրդը սարսափահար վազում է քուրմերի մօտ և խելագարի նման գոռում է.

— Անձնատուր լինինք, անձնատուր լինինք։

Կրակապաշտները ոչինչ չեն պատասխանում, որովհետև լուռ է իրենց քրմապետ Հիրվանը։ Հիրվանը կանգնած է իւրայիններով շրջապատուած. մոգպետը իր կրօնի աւանդութեան հակառակ, որ արգիլում է նրան արիւն թափել, զինուոր դարձած, հանդարտ նայում է այդ ժողովրդին։ Արհամարանքի թէ ցաւակցութեան ժպիտ է խաղում նրա շրթունքների վրայ։

— Անձնատուր լինինք։ Անձնատուր լինինք։ Քաղաքը յանձնենք նրան, ապա թէ ոչ վաղն արդէն ուշ կ'լինի։

Հիրվանն այն ժամանակ ասաց.

— Նուր-Էդդինը վաղն ապանուած կ'լինի։

Զարմացած ժողովուրդը սառած նայում է այդ մարգարէութիւնն անողին։ Ամէն կողմից նեսի նման թափւում են հարցերը.

— Ո՞վ կ'ապանէ նրան, մեզ ո՞վ կազատէ նրա ձեռքից։

Հիրվանը պատասխանում է.

— Ո՞վ կազատէ։ Մի կին։

Ամէն կողմից լսում են կասկածանքի շշունջներ, ապա և ձայներ։ Ամբոխը չէ հաւատում, նա յուզում է։ Իսկ աւելի և աւելի յանախ արձակուող ռումբերն աւերում են այդ սուրբ ողջախոհ քաղաքի քարէ պարիսպը, որ զօրի նման պատել է նրան։

Հիրվանը ձեռքով ցոյց տուեց։ Ամբոխը նայում է նրա ցոյց տուած կողմը և ինչ է տեսնում։—

Արեգակի ճառագայթներից պէծ-պէծին տուող փոշու ամպով պաշարուած ընդարձակ սառների մէջ երևում

է մի նորատի աղջիկ, որ ուրուականի նման համբաքայլ առաջ է գալիս։

Նա գեղեցիկ է. նա դեռ մանկահասակ է, բայց նրա տենդային կրակով բորբոքուող աչքերից, այդ նեղ, մեսաքսանման երկար թերթերունքով պատած աչքերից հերոսական զօրութիւն է թափւում. նրա հրափայլ մազերը խոպոպներ են կազմում ճակատի շուրջը. Իրանի վարդի թերթիկների նման թափանցիկ են նրա այտերը. ճկուն, բարակ իրանը նման է չինարի (լիանի) *). գաստակները զարդարուած են սաւադով պատած արծաթէ ապարանջաններով. սանդալի *) գնդակներից շինած քառամանեակի տակից բաբախում է նրա կուրծքը. թափանցիկ մնդուսի միջև, արեան կաթիլի նման խոշոր յակինդն աւելի ևս պարզում է նրա սպիտակ շրջազգեստը, իսկ մեսաքսէ երկար վերարկուն ձգուած է ետևից։

Մինչ ամբոխը շրջնջում էր հիացած, նա մտաւ իւր արենակիցների շրջանի մէջ տեղը։ Ամբոխը նրան դիտելով թնդանօթների որոտն էլ մոռացաւ, անընդհատ դիտապատ գետին գլորուողներին էլ։

Նա ծունդ չոքեց։ Հիրվանն ասաց նրան.

—Թամար, հասել է ժամը։ Եղբայրներդ, հայրդ, նշանածդ ընկան Նուր-Էդդինի զինուորների գնդակներից։ Մայրդ վշտից մեռաւ։ Հայրենիքդ նոյնպէս կորստեան է մատնուած։ Մենք քեզ ընտրեցինք, որպէս զի դու ազատես մեզ։ Համաձայն ես արդեօք. կամենում ես մեռածների վրէժը լուծել, իսկ կենդանիներին փրկել։

Թամարն արդէն մտածել էր այդ մասին, ծում էր պա-

*) Liane, lier խօսքից է, որ նշանակում է միացնել, կապել։ Մի քանի պատաղէջ բոյսերն այդպէս են կոչւում։ Այն գաղթավայրերի բոյսերն են, որոնք երենց ճիւղերով փաթաթւում են ուրիշ բոյսերին։
Թան. Թարգ.

*) Սանդալը հնդկական անուշաբոյր ծառ է։ Թան. Թարգ.

հել և աղօթել. նա լսել էր հին աւանդութիւններն, որոնք կենդանացնում, հոգի են տալիս մարդուն։

Նա պատասխանեց.

—Այո, կամենում եմ։

—Թամար, պատրաստ ես մեզ փրկելու համար քո երիտասարդութիւնդ, քո գեղեցկութիւնդ, քո կեանքդ, առաւել քան կեանքդ—քո անարատութիւնդ զոհելու։

—Պատրաստ եմ։

—Վեր կաց ուրեմն ու գնա. գնա յաղթական Նուր-Էդդինի մօտ։

—Կ'գնամ։ Ինչ որ վճռուած է, ինչ որ ասացիր ինձ՝ կ'կատարեմ,—ես նրան կ'սպանեմ։

Թամարը բարձրացաւ տեղից. նա պարզեց ձեռները. աչքերը բորբոքուեցան բարկութեամբ, նրա լայնացած ռունգերն ասես թէ արդէն որսի հոտն էին առնում։

Նա այս դրութեամբ աւելի ևս գեղեցիկ էր թւում ու ժողովուրդն էլ նոյն ոգևորութեամբ համակուած, դուռում էր յուզմունքից խեղդուելով.

—Գնա, գնա։

Եւ Թամարը մի հայեացք էլ, անյողդողդ վճռականութեամբ լի հայեացք ձգելով Հիրվանի վրայ, ճանապարհ ընկաւ։

Թամարը դանդաղ քայլերով դուրս եկաւ տաճարից, անցաւ փողոցներն ու հրապարակները, ոտքը քաղաքի շէմքից դուրս դրեց և մինչ արեգակն իւր մուրքին էր խոնարհւում ու երկայն ստուերներ իջնում երկրիս վրայ, նա, միայնակ, քայլերն ուղղեց Նուր-Էդդինի բանակը։

—

Գիշերը վրայ հասաւ։ Այնտեղ, հեռուն, տաղի վրայ ընկած սայրի նման, մի երկայն, նեղ շերտ միայն փայլում է մայր մանող արևի ճառագայթներից։ Այդ ծովն է,—

ծովը՝ որի վրայ ծփում են պատերազմողների արիւնով ներկուած աղաջրի կոհակները....

Եւ այդ մռայլ, խոր գիշերին, Թամարը հաստատ քայլերով առաջ է գնում,—միայն սիրան է, որ Թախծաղին ճմլում է կրծքում և քունքերի զարկերակները ուժգին բաբախում: Խաւարի մէջ դուրս են սողոսկում մի ինչ որ զարմանազան պատկերներ, մէկ էլ գիշատիչ Թռչունն է, որ իւր որսով զբաղուած, մերթ ընդ մերթ, Թամարի մօտենալուն պէս, համրաթռիչ վեր է բարձրանում՝ խռպոտ, չարագուշակ ձայն արձակելով:

Զարհուրելի անորոշութեամբ պաշարուած, Թամարն արագ քայլերով գնում է ճանապարհով. Թէև նպատակակէտը հեռու չէ, բայց նրան այնպէս է Թւում, Թէ կարծես երբէք տեղ հասնելու չէ:

Լեռների մէջ անկարծ երևում է մի կարմիր բիծ: Հէնց իմանաս հրդեհի բոցն ես տեսնում սաղարթախիտ եղևիններով հեռից: Կարմիր բիծն աճում, մեծանում, աւելանում է և, ասես արիւնաշաղախ ձեռների վրայ հաստատուած վահանի նման, լուսինն իւր հանդարտ լոյսը սփռում է ընդարձակ հարթավայրի վրայ:

Եւ Թամարը—սարսափելի պատկեր է տեսնում իւր չորս կողմը: Նա տեսնում է այն, ինչ որ հէնց մի փոքր առաջ երևակայել էր իւր մտքում՝—վերջին ճակատամարտի միջոցին ընկած, իրար վրայ Թափուած դիակների կոյտեր,—մեկնուած ձեռներ, փէսացած ոտներ, բաց շրթունքներով կապտած կարմրաւուն դէմքեր: Նրան Թւում էր, Թէ շարժւում, վեր են կենում նրանք: Մի տեսակ խուլ բզզոց է լսւում նրա ականջներում, ամբոխը—կապտադէմ ննջեցեալների ամբոխը փաղում է նրա եռից: Իւր նշանածը, հայրը, եղբայրները, նրանք բոլորն էլ այդտեղ են, ճանապարհի վրայ փռուած: Նրանց խոշոր, մահու վայրկենին լայն բացուած անշարժ աչքերը յառած են նրան.

Նրանց կրծքում, սրտի մօտ, վէրքը բացուած է՝ նման իրենց բաց մնացած բերաններին: Թոյլ, հազիւ լսելի մի ձայն, մեղմ հովիկի հունչի նման հասցնում է Թամարի ականջին այն խօսքերը, որ մի փոքր առաջ Բագուում ժողովուրդն ասում էր նրան՝

—Գնա, գնա:

Նա օրօրուեց, նրա միտքը խաւարում է, գիշերային սարսափը պաշարում է և ետ է մղում նրան: Նա պատրաստ է Բագու վերադառնալու:

Բայց նա վրդովւում է իւր այս փոքրոգութիւնից: Նա գնում է: Եւ աչքերը խփած, նա առաջ գնաց: Հայրենիքի սէրն ամեն մի վայրկեան զօրանում է նրա մէջ. նրան Թւում է, Թէ դա մի ահագին ծառ է, որի մօտ եղևինը մի խղճուկ խուշանճ է երևում: Նա իւր երևակայութեան մէջ գրկախառնում է Նուր-Էդդինին: Զարհուրելի, սեւ, զզուելի է Թւում նրան Նուր-Էդդինը: Եւ ահա այդ հրէշին պիտի դիւթեր ու ոչնչացներ ինքը: Նա բաց է անում աչքերը, շտապեցնում է քայլերը: Ուղղակի իւր հանդէպ, Նուր-Էդդինի բանակից ծխի քուլաները դանդաղ բարձրանում են վեր կաթնագոյն հորիզոնի վրայ: Յանկարծ նա ցնցուեց վայրի կանչի ձայն լսելով. մինի կոպիտ ձեռները բռնում են նրան և իրենց եռից քաշ ածում: Նա բանակումն է,—զինուորները Նուր-Էդդինի մօտ են քաշ տալիս նրան:

—

Նուր-Էդդինը հանդստանում է զովարար անկուածով ծածկուած ասղնագործ բարձերի վրայ և դրանցով զովացնում է իւր կրակի նման տաք այտերը. նրա ոտների տակ, քաղցրաբոյր դաստարի խրձիկների մէջև, թաղկաձև Թէք են ընկել իւր կանայքը:

Նրանց առաջ, նաւթի կանթեղներով լուսաւորուած հրապարակում, փռուած է արմաւենու տերևների օրինակներով զարդարուն ձիւնի նման սպիտակ մեծ գորգը, որի

վրայ պարում են չերքեզուհիները՝ երաժշտութեան մերթ դանդաղ և մերթ ուժգին բաղխումներով. կանթեղները պայծառ լոյս են սփռել այս ամբողջ տեսարանի վրայ: Երաժշտական խմբի կառավարիչ ստորուկը զուռնան հուպ է տալիս շրթունքներին և փոքրիկ եղեղնեայ սրինգը մերթ խիստ ձայներ արձակելով և մերթ շրշնջալով կառավարում է պարերը. մի ուրիշը կոնտոցը դանդաղաբար քսում է երկարականջ ճիանուրի լարերին. մի կին զուռնաչու հանած քմահաճ եղանակին հետևելով, հնչեցնում է խայտաբղէտ դահիրան անհարթ դրմբդրմբոց հանելով, մինչ մի բարակ, արևակէզ աղջիկ փեռրի ծայրով վանդման պղնձէ թելերն է շարժում թեթեւակի: Երաժշտութիւնն ու պարողների սպիտակազգեստ պատկերները թմրութիւն էին ձգել Նուր-Էդդինի վրայ: Եւ ահա նա տեսնում է դժգունադէմ մի կին, որ հանդարտ քայլերով, առանց ձայն ու ծպտունի, գրկաբաց, մոլոր հայեացքով մօտենում է իրեն: Եւ այդ դէմքի մեռելային սպիտակութեան վրայ նման ծաղկի նման կարմիր շրթունքներն առաւել ևս սպիտակ են թւում: Նա իւր քաղցրաբոյր շունչով դիպաւ Նուր-Էդդինի ճակատին: Նուր-Էդդինն զգաց, թէ ինչպէս նրա շրթունքները հպեցան իւր շրթունքներին, իսկ այդ համբոյրին հետևեց քաղցր խոնջութիւնը:

Նրան թւում է, թէ հոգին վերանում է իրենից և թէ այդ վհուկ կինն իւր կեանքը խլելով, սէր պարգևում փոխարէն: Զուռնի սուր ձայնն ու թմբուկի յաճախ հարուածի բաղխումները հնչեցին օդում: Նուր-Էդդինը յանկարծ սթափուեց: Նա ձեռքովը շփեց ճակատը՝ հէնց խմանաս ուզում էր տեսիլքը հեռացնել:

Բայց միթէ սա նոյն ինքը ուրուականն է իւր աչքերին երևում, թէ երազի ցնորքն է, որ արթուն ժամանակն էլ տևում է դեռ:

Նրա առաջ, զինուորականներով պաշարուած, կանգնած է մի կին: Նրա քօղի թեթեւակի բացուած ծալքերի տակից Նուր-Էդդինի աչքերին ընկաւ այդ կնոջ դժգոյն դէմքը, վարդագոյն բերանիկը, դիւթական հրաշալի աչիկներն, որոնք իւր թեթեւ նիրհն էին վրդովել:

Երաժշտութիւնը դադարեց... վարձակները կանգ առան—վեհապետի կանայքը վշներն երկարացրած, արմուկների վրայ բարձրացան այդ տարերկրացի կնոջը դիտելու համար: Զինուորականներն երկրպագեցին վեհապետին,—նրանք բանակի մօտակայքում հանդիպել էին այդ կնոջը՝ հաւանականօրէն քաղաքից գալիս: Նա դեռատի է, գեղեցիկ և լաւ հագնուած: Որքան հարց ու փորձ էին արել, իրենց բոլոր հարցերին մի բառ էր պատասխանում.—

—Նուր-Էդդին:

Շահը նշան արեց: Զինուորականներն առաջ հրեցին Թամարին:

—Ահա արքայից արքան: Երկրպագիր և ասա, ինչ ես ուզում:

—

Թամարն աչքերը ցած թողեց. նա դեռ սիրտ չէր անում այդ հրէշին նայելու:

Սակայն մի քայլ առաջ է գնում, խոնարհ գլուխ է տալիս և պատասխանում է.

—Ապաստան եմ խնդրում. միայնակ փախայ, հեռացայ սրբազան Բագուից: Արդեօք կ՚ընդունեմ ինձ...: Աղերսում եմ ոտներդ ընկած... քո ստորուկդ կ՚դառնամ:

—Մօտեցիր: Ոչնչից մի վախենալ:

Որքան ներդաշնակ, որքան փաղաքուշ էր այդ խօսքերն արտասանող ձայնը: Թամարը, որ յաղթականի կողմից կոպտութիւն էր սպասում, զարմացած և զգացուած է: Միթէ այսպէս է խօսում բռնակալը:

Այն ժամանակ արդէն նա համարձակւում է աչքերը վեր բարձրացնել ու նայել նրան: Նուր-Էդդինն իւր առաջն

էր. վառուող կանթեղների լուսով պայծառ լուսաւորուած է նրա դէմքը։

Իւր զարհուրանքով և ատելութեամբ տոգորուած մտքում Թամարն անճոռնի և արիւնարբու մէկն էր երևակայում Նուր-Էդդինին, մինչդեռ նա երիտասարդ էր և բարի։ Նրա հաստ կոպերի տակ փայլող աչքերը կանացի հայեացքի խորին քնքշանք են արտայայտում. նրա պայծառ ճակատն ասես թէ անընդունակ էր քարկութեան կնճիռներ կազմելու։ Ծիծղուն շրթունքներ ունէր նա և այտը իւր բարակ, նեարդային, սպիտակ ձեռքին յենած, կէս պառկած դրութեամբ շեշտակի նայում է շփոթուած Թամարին։

Այսպէս էր ահա սրբազան Բագու քաղաքի տիրապետը, այն դաժան զօրականը, խստասիրտ յաղթականը, որ իւր պատնէշների առջևը, քաղաքի հանդէպ, կտրած գլուխների մի ամբողջ դաշտ էր ցցել. նա երբէք գերի չէ վերցնում և մոլութիւնից ու արիւնից արբեցած, ոչ ծեր է խնայում, ոչ երեխայ և ոչ կին։

Թամարը չէր շարժւում։

Նուր-Էդդինը խօսեց կրկին։

—Ես խստասիրտ եմ նրանց համար, որոնք դիմադրում են ինձ, բայց բարի եմ՝ հլու հնազանդների համար։ Ասա ինձ անունդ։ Բաց երեսդ։

Թամարն ասում է իւր անունը, արագութեամբ բաց է անում երեսը և կրկին ծածկում է քողով։

Դա մի փայլակ էր, որ միայն Նուր-Էդդինը նկատեց և միմիայն նրան էլ ապուշ կրթեց։

Կանայք հետաքրքրութեամբ նայում էին Թամարին։ Նախանձի հուրը բորբոքուեց նրանց աչքերի մէջ։

—Ի՞նչ է ուզում այդ բարբարոս աղջիկը։ Զգուշացիր որոգայթից, ով Նուր-Էդդին։ Թող հեռացնեն նրան մօտիցդ։

Նուր-Էդդինը ոչինչ չպատասխանեց նրանց։ Մի ինչ որ տարօրինակ հայեացքով նայեցաւ և շշնջալով պատուէր

տուեց։ Ինչպէս ոչխարի հօտը շների ատամներից կամ հովուի մահակից, այնպէս վեր կացան տեղերից ու հեռացան կանայք, տարուկները, պարոշները։ Կրակները հանգան, պահնորդները դատարկ տարածութիւն կազմեցին արքայական վրանի շուրջ. և մինչ համատեղութիւններն հանդարտ իրենց շրջանն էին անում, և պարզ երկնակամարի տակ կէս գիշերային զովարար զեփիւռը հազիւ հազ ծածանում էր դրօշակներն, իսկ կանանց կարած վարդերի քնքուշ բոյրը տարածւում էր օդի մէջ, Թամարն ու Նուր-Էդդինը մնացին մենակ։

—

Նուր-Էդդինը պահ մի լուռ կացած զմայլած նայում էր Թամարին։ Թամարը քօղը յետ արած կանգնած էր նրա առաջ առկայծող աստղերի նսեմ լոյսի տակ։ Նա պինդ սեղմած էր իւր շրթունքներն՝ ասես թէ կամենալով արգելք լինել հէնց այն է արտայայտուելու պատրաստ խօսքերին։ Ձեռքը սառն էր, սառն էին և ուսերն ու հոլանի կուրծքն։ Արիւնը խփում էր սրտին։ Նա զարհուրում էր ինքն իրենից անգամ. իւր մօտալուտ սարսափելի դրութիւնն բոլորովին ճնշել էր նրան։ Սակայն թուլութեան այդ առաջին արտայայտութեանն շուտով զսպեց նա.— սիրտն ուժգին բաբախում է կրծքում, բայց ոչինչ չպէտք է արգահատէ նրան—Թամարը իւր երդումը կ'կատարէ։

Եւ ահա մէկը բռնում է իւր ձեռքը. նրան կամացուկ Նուր-Էդդինի կողմն են քաշում։

—Թամար, մենք մենակ ենք։ Ասա ինձ, ինչն է քեզ այստեղ բերել։ Աչքերդ խոնարհ, սառցային հայեացքով մի կանգնիլ առաջս։ Կրկնում եմ—ոչնչից մի վախենալ։

—Երկիւղը հեռու է ինձանից։

—Յայտնիր ինձ քո ցանկութիւններդ, քո դաղտնիքներդ։

—Ցանկութիւնս—ես այդ արդէն ասացի քեզ. իսկ

գաղտնիքներս — դրանք կ'մնան հոգուս մէջ։ Բաւական է որ ասում եմ — իմ տէրս եղիր։

— Իրաւունք ունիս։ Դու չքնաղ ես, գեղեցիկ։ Ի՞նչիս է պէտք մնացածը։ Ինձ թւում է, թէ ես տպասում էի քեզ, թէ դու պէտք է որ դայիր։ Դու նրանցից մէկն ես, որոնց սէրը կեանքով կարելի է միայն դնել։

Թամարն ասես թէ մի խիստ հարուած ստացաւ սրտին։

— Երևում է, դու զգացել ես, որ իմ չարաբաղդ սէրը կարող է քեզ մահ պատճառել։

— Նախազգացումները, Թամար, ինձ վրայ չեն ազդում։ Քո հրապոյրի զօրութիւնն փորձեցի անձիս վրայ և զգում եմ, որ քեզ այնպիսի խորը սիրով սիրեցի, որպէս երբէք չեմ սիրել։ Ո՞վ է քեզ այդ ոյժը տուել։ Քեզ ոչ օգնեց ինձ տիրանալու։ Հաղիւ միայն նայեցայ քեզ, բայց սակայն հոգուս աչքերը քեզ այնքան պարզ են տեսնում, որ ասես թէ արևն իւր փառահեղութեամբ պատած լիներ քեզ։ Աստ ուրեմն ինձ քո կամքդ։ Քո գերիդ՝ և ոչ տէրդ, լսում եմ քեզ։

Թամարն իւր սքանչելի գլուխը քնքշութեամբ դարձնում է Նուր-Էդդինի կողմը և այս անգամ արդէն իւր թաց աչքերը նրա հայեացքն են որոնում։

— Բայց խօսքս կ'կատարես արդեօք։

Թամարը յոյս ունի, նա նախատեսում է փրկութիւնը, տեսնում է, որ իւր մէկ խօսքովն ազատուելու է Բագուն։

— Խօսիր։

— Կ'կատարես արդեօք խօսքս, եթէ մինչև իսկ յանդգնեի ասելու, — Տէր, դարձիր քո սահմաններդ, տար զօրքերդ, ազատիր սրբազան Բագու քաղաքը։ Ես կամենում եմ, որ այպէս լինի։

Այդ խօսքի վրայ բոլորովին այլափոխուեց Նուր-Էդդինի դէմքը։ Նրա բարի աչքերից կայծակ էին ցայտում։ պայծառ դէմքը մայլեց, վարդի կերպարանք ստացաւ։ վայրենաբար բուռն ծիծաղելիս ծռմռուեցան նրա շրթունքներն և երևան եկան ատամները։

Խռպոտ ձայնով ասաց նա.

— Երբէք, երբէք լինելու բան չէ այդ։ Անդարձ դատապարտուած է քաղաքը։ Ո՞վ կին, մի բան կայ դեռ, որ սիրելուց էլ թանկ է ինձ համար — վրէժխնդրութիւնն է այդ։

Տխուր մտածում էր Թամարը.

«Վերջացած է, պէտք է սպանեմ սրան»։

Այն ժամանակ յանկարծ Նուր-Էդդինը հարցրեց նրան.

— Բայց դու խօ իմն ես, այնպէս չէ՞ Թամար։

— Եթէ ինձ չքնաղ ես համարում, ես քեզ եմ պատկանում և միայն մահը կ'բաժանէ մեզ։

Թամարը մի տարօրինակ ձայնով ասաց այդ. կաթելի էր կարծել, որ հէնց այն է, իւր գաղտնիքը դուրս էր պրծնելու իւր լեզուի ծայրից, իւր խոստումը զոհուելու էր անխոհեմ դիմաստութեան։ Բայց Նուր-Էդդինը ոչինչ չէր հասկանում։

— Ե՛կ, Թամար, մոռանանք ամեն բան, — դու՝ քո վիշտդ և ես՝ իմ զայրոյթս։ Դու չքնաղ ես, չքնաղ՝ քաղցրը քան ամուսինս՝ Նուրմագիլը։ Թող քո մեապսեայ նուրբ մազերիդ հրաշալի հիւսերը ոսկէ շղթայ դառնան իմ գերութեան համար, հնչական, մաքուր ձայնդ բիւրեղի է նման, իսկ մարմինդ որպէս քնքուշ պտուղ անուշահոտութիւն է բուրում։ Սիրում եմ քեզ։

Փափուկ մոմի նման հալւում էր Թամարի սիրտն այս խօսքերը լսելով և իւր ոտների տակ տեսնելով մի այսպիսի գեղեցիկ, բարի, բայց և հպարտ ու խստասիրտ մարդ։ Եւ մինչ Նուր-Էդդինը երկիւղած մանկան նման գրկախառնած՝ քնքշութեամբ դէպի իրեն է քաշում նրան, Թամարը սրսռում է և ուշադրութեամբ իւր հոգու գաղտնարանն թափանցելով, սարսափահար ասում է ինքն իրեն.

«Աւաղ, անբաղդս, ես սիրում եմ սրան»։

—

Արքայական վրանում, ուր յատակին փռուած Դաղստանի և պարսկական թանկագին գորգերից ոտի ոչինչ ձայն չէ լսում, կարճատև, բայց հեշտական ժամերից յետոյ, լուսոյ դէմ, կանգնած է Թամարը անկողնի առաջ, ուր հանգստանում է Նուր-Էդդինը։

Դժգոյն դէմքով, սպիտակ շորեր հագած, հերարձակ Թամարը դիտում է վեհապետի խաղաղ դէմքը, որ լուսաւորուած է եռոտանու վրայ, պսպղուն գէնքերի միջև դրրուած լամպարի թոյլ լուսով։

Նուր-Էդդինը մանկական քնոյ մէջ էր։

Նա անհոգ քնած է։

Թամարը հարուածը չիջեցրեց։

Ասես թէ մի տեսակ անուրջքի մէջ լինէր նա. և ահա կրկին նրա աչքերի առաջ պատկերանում է անողոք իրականութիւնն, իւր արիւնածարաւ յանձնառութիւնն, որ սարսափ էր ազդում իրեն։

Սակայն հասել էր յարմար ժամը։ Ամէն ինչ քնած է բանակում, շուտով աստղերը կ'մարին և կ'անհետանան արևածագի վարդակարմիր փայլի մէջ. կսկսի լուսանալ։ Հիրվանն և իւր զօրքերը նշանի են սպասում։ Նուր-Էդդինի մահուամբ միայն պէտք է ապահովուի նրանց յաղթանակը։

Իսկ Թամարը շարունակ մնածում է։

— Ահա ինձ յաղթահարողը... իմ զոհս։ Այո, նա կը մեռնի, նա պէտք է մեռնի։

Պարսկական դաշոյնի սուր, լայն և կարճ սայրի ցոլքն եռոտանու վրայից ընկնում է նրա աչքին. նա վեր է առնում սայրը և զողզող մատներով զննում է նրա սրութիւնը։ Բայց մի կողմն է հրում դաշոյնը։

— Ի՞նչպէս պիտի կարողանամ ես այդ անել։ Սպանել։ Ո՛հ, աւելի լաւ կ'համարեմ խայտառակուել և երդմնազանց լինել։

Նա մօտենում է վրանի մուտքին. դուրս նայելու համար բարձրացնում է ծանր գործուածքը։ Առաւօտեան աղջամուղջի առաջին նշոյլները փայլում են հորիզոնում։ Մի վայրկեանից փողերի և թմբուկների ձայները կ'աղդարարեն բանակի զարթնելը։ Եթէ մի բոպէ ևս տատանուի՝ ուշ կ'լինի արդէն։ Յանկարծ նա շուռ եկաւ։ Նրան այնպէս թուաց, որպէս թէ մինը խօսեց իւր ետևում։ Նուր-Էդդինը դեռ քնած էր. բայց նրա բերանը կիսաբաց է— հէնց նոր էր Թամարի անունը արտասանել։

Թամարը ծունգ չոքեց։

— Ո՛հ, Նուր-Էդդին, ես սիրում եմ քեզ, սիրում եմ։

Եւ իւր շրթունքները հպում է նրա զօրեղ ձեռքին, բայց որպէս զի չզարթեցնէր նրան՝ այնքան թեթև էր հպում, որ կարծես օդային գուրգուրանք լինէր դա։

Զոհաբերութիւնը վճռուած է։ Թամարը զոհում է իրեն, ընդունում է իւրայիններին անէծքը։

Նուր-Էդդինը կենդանի կ'մնայ։

Բայց Նուր-Էդդինի կեանքը—համազօր է Բագուի պաշտպանների մահուան. իւր սիրոյ յաղթանակը—հայրենիքի կորուստն է. իւր երակներում եռացող արիւնը—դա իւր հուր ու սուրի մատնուած հայրենիքն է. իւր առաջիկայ երջանկութիւնն—ազգականների և սրտակիցների չարչարանքն է։

Եւ կրկին մի քիչ առաջ ճանապարհին տեսած զարհուրելի ճիւաղները պատկերանում են իրեն,—անշարժ բիբերով կապտած դէմքեր, երկաթ մխուած կրծքեր. և կրկին, որպէս թէ զեփիւռի թեթև տատանմամբ խաւարի միջից իւր ականջին հասնում են հանդարտ ձայներ, որոնք ասում են.

— Գնա, գնա։

Նա կրկին վեր առաւ դաշոյնը. մի կողմ քաշեց լամպարը, որն անչափ լոյս է տալիս։ Նա վճռել է գործել.

բայց նա չէ ուզում տեսնել։ Խաչարը պատեց Նուր-Էդդինին։ Երկչոտությամբ շուրջը նայելով, վիզը երկարացրած, Թամարը մոտենում է նրան, յետոյ յանկարծ ետ է քաշւում, թաղ է կենում վրանի խորերում, վեր է ձգում զէնքը։

Թամարը գլուխը ձեռքին յենած, նստել է այդտեղ և հեկեկում է անզգայ դրութեամբ։

Հեռուից աքաղաղի երգի նման մի պարզ ձայն հասնում է նրա ականջին։ Արդեօք Բաղուից եղջերուավոր ձայնն չէ՞ դա։

Նրա շուրջ, ամէն կողմից լսւում են անողոք ձայներ, որոնք կրկնում են.

—Գնա, գնա։

Թամարը խցում է ականջները։ Բայց, չնայելով այդ ամենին, ձայներն առաջուայ նման կրկին լսւում են նրա ականջին՝—և այն ժամանակ ամէն ինչ պարզուեց նրան։ Այո, նա պէտք է զոհ բերէ իւր անձը. բայց այժմ արդէն հայրենիքը նրանից պահանջում է զոհաբերել ոչ թէ պատիւը, ոչ թէ գեղեցկութիւնը, մինչև անգամ իւր անարատութիւնը չէ, որ զոհ է պահանջում հայրենիքը, հապա նոյն իսկ իւր սէրը։ Նա վեր է կենում տեղից։ Անկեանը գորգի վրայ մի փայլուն իր գրաւում է նրա ուշադրութիւնը—դա իւր ձգած դաշոյնն է։

Նա կրկին վեր է առնում դաշոյնը. նա մօտենում է անկողնին. նրա ձեռքը Նուր-Էդդինի գլուխն է փնտրում. ձեռքը տանում անցընում է նրա վզի վրայով և դողդոջուն մատների տակ զգում է զարկերակի բաբախումը, որի ամէն մի զարկը նրա սրտի կեանքն էր արտայայտում։

Սուր սայրն իջեցնում է նա այդտեղ, յետոյ յանկարծ իւր ամբողջ մարմնի ծանրութեամբ հուպ է տալիս դաշոյնը...։

Տաք արեան ուժգին հոսանքը ցայտեց նրա դէմքին. նա վեր է ընկնում Նուր-Էդդինի դիակի վրայ, արտասու-

քով լուանալով և համբոյրներով ծածկելով նրա գլուխը՝ որ ոչ մի շարժում չէր գործում, նրա աչքերը՝ որ ոչ մի անգամ չբացուեցան, նրա շրթունքները՝ որոնք ոչինչ հառաչ չարձակեցին։

Թամարը յուսահատ կանչում է նրան.

—Նուր-Էդդին, Նուր-Էդդին։

Առաջուայ նման միևնոյն լռութիւնը տիրել է վեհապետի վրանում։

Այն ժամանակ Թամարը կանգնում է ուղիղ, ջղային ուժգնութեամբ ծռմռուած ձեռներով չանկռտում է իւր այտերը, կուրծքը և իւր արիւնը խառնում է Նուր-Էդդինի արեան հետ։ Նա եռոտանու վրայից վեր է առնում լամպարը և կրակում է անկողնի վասակը. նաւթ է ածում վրանի դիւրավառ յատակի վրայ և մինչ ինքն առանց զինուորականներից և ոչ էլ յետապնդումից վախենալու, կիսամերկ, արիւնաշաղախ, խելագարի նման վազում էր դաշտ՝ վայրի աղաղակ բարձրացրած, շուտով Նուր-Էդդինի վրանից բարձրացան բոցի բարձր լեզուակները, որոնք աւելի ևս հրհրատում էին առաւօտեան զով քամուց։

—

Լսուեց թնդանօթի բոմբիւնը։ Բաղուի պարիսպների վրայից արձակւում են ռումբերը—հրդեհը զարթեցրել էր նրանց։ Բացւում են քաղաքագռները և կրակապաշտները յարձակւում են պաշարողների վրայ։

Իզուր են պարսիկները իրենց պետին կանչում։ Վրանում, ուր զինուորականները մնում են աղմուկի լուրը տալու, Նուր-Էդդինին տեսնում են խողխողած և սարսափը տիրում է նրանց—նրանք այլ ևս իրենց առաջնորդի ձայնը չեն լսում։

Թռչունների երամների նման փախուստ են տալիս նրանք կրակապաշտների գնդակներից, և յաղթական Հիրվանը, իւր հայրենիքի թշուառութիւնները մոռացած,

հանդիսաբար վերադառնում է Բագու։ Ճանապարհին, անշունչ դիակի նման փոշու մէջ թաթախուած ընկած է մի էակ։

Հիրվանի մօտենալիս, նա զարհուրելի արտայայտութեամբ մօտենում է նրան։

—Դո՞հ ես, Հիրվան։ Լա՛ կատարեցի պարտաւորութիւնս։

Թամարի անունն անցաւ բոլոր գոլքի շրթունքների վրայից։ Ամէն կողմից շրջապատեցին և ուրախ-ուրախ ողջունում են նրան։

—Փառք և պատիւ քեզ, Թամար։ Նուր-Էդդինի գորքը վախուտա դարձաւ։ Հայրենիքը փրկուած է։

—Հայրենիքը փրկուած է։ Ուրեմն ես կարող եմ մեռնել։

Եւ միևնոյն դաշոյնով, որով սպանել էր Նուր-Էդդինին, Թամարը կտրեց և իւր կոկորդը։

Մեռնելով նա համբուրում էր իւր սիրած մարդու թարմ արեան հետքերը, որոնք մնացել էին ձեռքի վրայ։

. . . . . .

. . . . . .

Խաղաղութիւնը տիրեց։ Մաքուր օդի մէջ ազատ սաւառնում են թռչունները. այնտեղ, պարսից բանակի վրայ կանգնած է բարակ ծխի ամպը. արեգակը ուրախ-ուրախ ոսկեզօծում է սրբազան Բագու քաղաքի բուրգերն ու աշտարակները։

Եւ Թամարի անունն արդէն բանաստեղծների բերանումն է—նրան փառաբանում, լերան բարձունքն են հասցնում, ուր արքայ արծիւներն են իրենց բոյնը դնում, փառաբանում, հասցնում են ծովի ափն, ուր սպիտակ աւազի վրայ ծովի արծաթափայլ խեղդակներն իրենց յատկանական երգն են երգում։

Խ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Publiczna Biblioteka
P.A. 1921--1922

Հրատարակիչ։ Հանրագիտական գրադարան։